

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ  
ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաշվառման համար	Խմբագրության համար	Հաստատման ամսաթիվ	Ուժի մեջ մտնելու ամսաթիվ
ACBA 55 REG 02#6	14	29.05.2025թ.	05.06.2025թ.

Հեղինակ՝

Ստորաբաժանում	Պաշտոն	Անուն Ազգանուն
	Իրավաբանական և համապատասխանության տնօրեն	Զարինե Ազիզյան

Նախահաստատող՝

Պաշտոն	Անուն Ազգանուն
Խորհրդին կից կառավարման, նշանակումների և վարձատրության հանձնաժողովի նախագահ	Բրունո Շարրիե
Խորհրդի նախագահ	Ռաֆայել Սարգսյան

Հաստատող՝

Պաշտոն	Անուն Ազգանուն
Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահ	Ռաֆայել Սարգսյան

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ԲԱԺԻՆ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 4

- 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ..... 4
- 2. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ..... 5

ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ..... 5

- 3. ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ..... 5
- 4. ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ..... 6

ԲԱԺԻՆ 3. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ..... 6

- 5. ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ..... 6
- 6. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ..... 6
- 7. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ..... 7
- 8. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ..... 7
- 9. ԽՈՐՀՐԴԻ ԱՎԱԳ ԱՆԿԱԽ ԱՆԴԱՄԸ..... 8
- 10. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ ՎԵՐՋԻՆԻՍ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ. 9
- 11. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ..... 9

ԲԱԺԻՆ 4. ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ..... 10

- 12. ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ..... 10
- 13. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ..... 10
- 14. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ..... 11
- 15. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԸ և ՔՎՈՐՈՒՄԸ ..... 11
- 16. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 12

ԲԱԺԻՆ 5. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՅՈՒՄԸ ..... 12

- 17. ՆԻՍՏԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ և ԴՐԱՆՑ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 12
- 18. ՕՐԱԿԱՐԳԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ..... 13
- 19. ՔՎՈՐՈՒՄԸ և ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ..... 13
- 20. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ..... 14

ԲԱԺԻՆ 6. ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ,  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՅՈՒՄ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ..... 15

- 21. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ..... 15
- 22. ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ..... 15
- 23. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ..... 16
- 24. ԽՈՐՀՐԴԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱՆ ..... 16
- 25. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ..... 17

26. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ .....	17
27. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ.....	17
ԲԱԺԻՆ 7. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ .....	18
28. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	18
29. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ.....	18
30. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	19
31. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԿԱԽ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	19
32. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՓՎՈՒՄՆԵՐԸ .....	20
33. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ .....	20
34. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ .....	21
35. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ.....	21
ԲԱԺԻՆ 8. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ .....	22
36. ԽՈՐՀՐԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ .....	22
ԲԱԺԻՆ 9. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ .....	23
37. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ .....	23
38. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ .....	23
39. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ .....	24
40. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ և ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ .....	24
41. ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ և ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ.....	24
ԲԱԺԻՆ 10. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	24
42. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ և ՇՐՋԱՆԱԿԸ.....	24
43. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ .....	25
44. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՏ .....	25
ԲԱԺԻՆ 11. ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	25
45. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ.....	25
46. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ.....	25

## **Ծանոթագրություն**

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում տեղի ունեցող կորպորատիվ կառավարման բարեփոխումները՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի կանոնակարգը՝ ACBA 55 REG 02#6, ամբողջությամբ վերաշարադրվել է:

# **ԲԱԺԻՆ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

## **1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

1.1. Կանոնակարգում օգտագործվող և դրանով չսահմանված հասկացությունները մեկնաբանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դրանց տրված իմաստին համապատասխան:

1.2. Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

**ԱԿԲԱ բանկի խումբ**՝ ԱԿԲԱ բանկի խումբը ներառում է Հիմնական ընկերությունը և Դուստր ընկերությունը/ները,

**Ավագ ղեկավարություն**՝ Հիմնական ընկերության/Բանկի գլխավոր գործադիր տնօրենը, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալները, ռիսկերի կառավարման տնօրենը,

**Բանկ**՝ «ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերությունը,

**Բանկի ղեկավարներ**՝ անձինք, ովքեր «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով համարվում են Բանկի ղեկավարներ, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ Խորհրդի նախագահը, Խորհրդի անդամները, գլխավոր գործադիր տնօրենը և Բանկի այլ ղեկավարներ (օրինակ՝ գլխավոր գործադիր տնօրենի տեղակալները, ռիսկերի կառավարման տնօրենը, այլ տնօրեններ),

**Բանկի Կանոնադրություն**՝ Բանկի կանոնադրությունը, որը հաստատվել է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից և գրանցվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

**Գլխավոր գործադիր տնօրեն**՝ Բանկի միանձնյա գործադիր մարմինը, որը պատասխանատու է Բանկի գործադիր կառավարման և ամենօրյա գործունեության համար՝ գործող օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով,

**Գործադիր մարմին**՝ գլխավոր գործադիր տնօրենը, ով հանդիսանում է Բանկի միանձնյա գործադիր մարմինը,

**Ընդհանուր ժողով**՝ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը, որը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է և իրավասու է կայացնելու որոշումներ՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ բաժնետերերին վերապահված հարցերի վերաբերյալ,

**Խորհուրդ**՝ Բանկի կոլեգիալ կառավարման մարմինը, որը ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակում պատասխանատու է ռազմավարական վերահսկողության, գործադիր կառավարման վերահսկման և բաժնետերերի և այլ շահակիցների շահերի պաշտպանության համար,

**Խորհրդի գործառույթներ**՝ Խորհրդի իրավասություններն ու գործողությունները, որոնց միջոցով Խորհուրդը կատարում է ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և Կանոնակարգով իրեն վերապահված իրավասություններն ու պարտականությունները: Դրանք ներառում են, ի թիվս այլոց, հաստատումը, նշանակումը, մոնիթորինգը և վերանայումը:

**Խորհրդի պարտականություններ**՝ կառավարման, ռազմավարության, ռիսկերի և համապատասխանության վերահսկման և այլ հիմնական ոլորտներ, որոնք ազդում են Բանկի երկարաժամկետ հաջողության վրա և որոնց համար Խորհուրդը հաշվետու է Բանկին և Բանկի շահակիցներին: Այս սահմանումը վերաբերում է նրան, թե Խորհուրդը, իր գործառույթներից զատ, ինչ պետք է կատարի կամ վերահսկի (ինչպես է իրականացնում իր դերը)

**Խորհրդի պատասխանատվություն**՝ Խորհրդի անդամների իրավական պատասխանատվությունը իրենց իրավասությունների, գործառույթների կամ պարտավորությունների խախտման համար,

**Խորհրդի պարտավորություն**՝ Բանկի և Բանկի շահակիցների լավագույն շահերի հաշվառմամբ

գործելու Խորհրդի անդամների իրավական և էթիկական պարտավորությունը,

**Կորպորատիվ կառավարման կանոնագիրք՝** Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը

**Հաշվիչ հանձնաժողով՝** մարմին, որը պատասխանատու է կիրառելի օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Ընդհանուր ժողովի ընթացքում քվեարկության վերահսկման և ձայների հաշվարկման համար,

**Շահերի բախում՝** իրավիճակ, երբ Խորհրդի անդամի անձնական, ֆինանսական կամ մասնագիտական շահերը կարող են հակասել Բանկի հանդեպ նրանց ստանձնած պարտավորություններին,

**Վերահսկող մարմին՝** Բանկի գործունեությունը վերահսկող մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ «Կենտրոնական բանկ»)

**Ռիսկի ախորժակ՝** ռիսկերի այն չափը, որը Բանկը կարող է և ցանկանում է ստանձնել՝ չվնասելով իր ֆինանսական կայունությունը և բնականոն գործունեությունը:

## **2. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

2.1. «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ Խորհրդի կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է Բանկի Խորհրդի կառավարման շրջանակը, կառուցվածքը և գործունեության սկզբունքները: Կանոնակարգը մասնավորապես՝

ա) սահմանում է Խորհրդի և Խորհրդին կից հանձնաժողովների կազմը, կառուցվածքը և գործունեության ընթացակարգերը,

բ) հստակեցնում է Խորհրդի անդամների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը,

գ) սահմանում է Խորհրդի անդամների առաջադրման, իրավահաջորդության, գործունեության գնահատման և վարձատրության չափանիշները,

դ) խթանում է Խորհրդի թափանցիկությունը, բարեվարքությունը և շահակիցների հետ արդյունավետ փոխգործակցությունը:

2.2. Բանկի կանոնադրությունը, իր հերթին, սահմանում է Խորհրդի, որպես կառավարման մարմնի իրավասությունները՝ գործող օրենսդրությանը և կանոնակարգերին համապատասխան:

2.3. Կանոնակարգը ընդունվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքները, Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, Բանկի Կանոնադրությունը և այլ կիրառելի իրավական ակտեր: Կանոնակարգի և գործող օրենսդրության միջև հակասության դեպքում գործում են օրենսդրությամբ սահմանված կարգավորումները:

2.4. Կանոնակարգը կիրառելի է նաև ԱԿԲԱ Բանկի խմբում ներառված ընկերությունների գործունեության նկատմամբ, այնքանով որքանով դա թույլատրելի է կիրառելի օրենսդրությամբ: ԱԿԲԱ Բանկի խմբի շրջանակներում իրավասությունների պատվիրակման և ներկայացուցչության հարցերը կարգավորվում են Բանկի Կանոնադրությամբ և համապատասխան ներքին իրավական ակտերով:

## **ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

### **3. ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

3.1. Խորհուրդը Բանկի կոլեգիալ կառավարման մարմինն է, որն իր իրավասությունների շրջանակում պատասխանատու է Բանկի գործունեության ռազմավարական ուղղվածության, վերահսկողության և հսկողության համար: Խորհրդի առաքելությունն է՝

ա) ապահովել Բանկի երկարաժամկետ հաջողությունը և կայունությունը,

- բ) վերահսկել Բանկի ռազմավարության և ռիսկի ավտորժակի մշակումն ու իրականացումը,
  - գ) վերահսկել գործադիր մարմնի գործունեությունը,
  - դ) Բանկում խթանել պատշաճ կորպորատիվ կառավարումը, էթիկական վարքագիծը և կանոնակարգային համապատասխանությունը,
  - ե) պաշտպանել բաժնետերերի շահերը և աջակցել շահակիցների հետ արդյունավետ փոխգործակցությանը:
- 3.2. Խորհուրդն իր առաքելությունն իրականացնում է բարեվարքության, թափանցիկության, անկախության և հաշվետվողականության սկզբունքներին համապատասխան:

**4. ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

- 4.1. Խորհուրդը պատասխանատու է գործող օրենսդրությամբ, Բանկի Կանոնադրությամբ և Կանոնակարգով սահմանված հետևյալ հիմնական ոլորտների համար՝
- ա) Բանկի ռազմավարություն և բիզնես մոդել,
  - բ) Կորպորատիվ կառավարում,
  - գ) Ռիսկերի և համապատասխանության վերահսկողություն,
  - դ) Ներքին հսկողություն,
  - ե) Ֆինանսական վերահսկողություն,
  - զ) Շահակիցների հետ հարաբերություններ և տեղեկատվության բացահայտում,
  - է) Շահերի բախում և էթիկական վարքագիծ
- 4.2. Խորհրդի գործառույթներն ու իրավասությունները, որոնք բխում են վերոնշյալ հիմնական ոլորտներից, մանրամասն սահմանվում են Բանկի Կանոնադրությամբ և գործող օրենսդրությամբ:

**ԲԱԺԻՆ 3. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

**5. ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

- 5.1. Արդյունավետ որոշումներ կայացնելու, հուսալի վերահսկողության և ներառական կառավարում ապահովելու նպատակով Խորհուրդը պետք է խթանի իր կազմի բազմազանությունը: Բազմազանությունը պետք է արտացոլվի հետևյալ ուղղություններով՝
- ա) սեռ և տարիք,
  - բ) մասնագիտացում և փորձ,
  - գ) հմտություններ, կարողություններ և առաջնորդության ոճեր,
  - դ) մշակութային, ակադեմիական և աշխարհագրական բնորոշումներ, այնքանով որքանով վերաբերելի է:
- 5.2. Խորհուրդը պետք է ապահովի, որ Խորհրդում յուրաքանչյուր սեռի ներկայացվածությունը կազմի առնվազն 30%, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Բանկի ռազմավարական նպատակներին և ռիսկի պրոֆիլին համապատասխան տեսակետների օպտիմալ հավասարակշռություն պահպանելու նպատակով Խորհրդի կազմը պետք է պարբերաբար վերանայվի:

**6. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- 6.1. Իրենց վերահսկողական պարտականությունները արդյունավետ իրականացնելու համար Խորհրդի անդամները պետք է լինեն բարեվարք, օժտված լինեն համապատասխան կարողություններով և փորձով: Խորհրդի անդամ կարող է լինել << կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող անձը, որը համապատասխանում է << օրենսդրությամբ և Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին:
- 6.2. Խորհրդի կազմը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝
- ա) Խորհրդի կազմի առնվազն մեկ երրորդը պետք է անկախ լինի: Անկախ անդամ է համարվում այն անձը, որը համապատասխանում է օրենսդրությամբ, Կորպորատիվ կառավարման կանոնագրքով և

Կանոնակարգի 7-րդ կետում սահմանված անկախության չափանիշներին: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա Խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

բ) Յուրաքանչյուր բաժնետեր, անկախ մասնակցության չափից, Խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

## **7. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

7.1. Խորհրդի անկախ անդամ կարող է ընտրվել այն անձը, ով՝

ա) վերջին երեք տարվա ընթացքում Բանկի գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել Բանկում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ,

բ) վերջին երեք տարվա ընթացքում Բանկից կամ Բանկի հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես Խորհրդի անդամ ստացած վարձատրության,

գ) վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, Խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որևէ գործարար հարաբերություն Բանկի և (կամ) Բանկի հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ,

դ) վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի և (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և (կամ) աշխատող,

ե) վերջին տասը տարվա ընթացքում վեց տարուց ավելի չի հանդիսացել Բանկի Խորհրդի անդամ,

զ) չի հանդիսանում Բանկի նշանակալից բաժնետեր,

է) վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել Բանկի նկատմամբ՝ որպես հանրային ծառայող.

ը) չի հանդիսանում սույն մասի «ա-է» ենթակետերում նշված անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

7.2. Բաժնետերերի միջև կնքված համաձայնագրերը կարող են նախատեսել անկախ անդամների համատեղ առաջադրման հատուկ կանոններ, որոնք պետք է հաշվի առնվեն Խորհրդի անդամների անկախությունը գնահատելիս՝ անկախության սահմանված չափանիշներին զուգահեռ:

7.3. Խորհրդի անկախ անդամի վրա վերոնշյալ սահմանափակումները տարածվում են իր լիազորությունների իրականացման ողջ ժամանակահատվածում:

## **8. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱԸ**

8.1. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կազմից՝ Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

8.2. Խորհուրդն արդյունավետ ղեկավարելու համար Խորհրդի նախագահը պետք է տիրապետի առաջնորդության, հաղորդակցման և կառավարման անհրաժեշտ հմտություններին:

8.3. Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում և համակարգում է Խորհրդի և Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը.

- սահմանում և հաստատում է Խորհրդի նիստերի օրակարգը,
- հրավիրում և նախագահում է Խորհրդի նիստերը,
- ապահովում է նիստերի արձանագրությունների վարումը, դրանց ճշգրտությունը և պահպանումը,
- Խորհրդում խթանում է բազմազանության, ներառականության և կառուցողական բանավեճի մշակույթը,
- խրախուսում է Խորհրդի բոլոր անդամների ակտիվ ներգրավվածությունը՝ հիմնվելով նրանց անհատական հմտությունների վրա,
- կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:

բ) հանդիսանում է կապող օղակ գործադիր մարմնի համար.

- արդյունավետ աշխատանքային հարաբերություններ է պահպանում գլխավոր գործադիր տնօրենի հետ, հարգելով վերջինիս պատասխանատվության շրջանակը՝ տրամադրում է խորհրդատվական աջակցություն,
- ապահովում է, որ անհրաժեշտության դեպքում վերահսկողական գործառույթներ իրականացնող անձինք ուղղակի հաղորդակցության հնարավորություն ունենան Խորհրդի նախագահի հետ՝ առանց գլխավոր գործադիր տնօրենի ներկայության:

գ) ղեկավարում է կորպորատիվ կառավարման զարգացումը.

- վերահսկում է Բանկի կորպորատիվ կառավարման շրջանակի իրագործումը, մոնիթորինգը և շարունակական կատարելագործումը:
- ապահովում է, որ կառավարման համակարգը մշտապես համապատասխանի միջազգային լավագույն փորձին և ժամանակին արձագանքի կանոնակարգային զարգացումներին, շահակիցների ակնկալիքներին և Բանկի ռազմավարական առաջնահերթություններին,
- առաջնորդում է կառավարման հետ կապված վերափոխումները, այդ թվում՝ Խորհրդի կառուցվածքի, գնահատման և հաշվետվողականության ոլորտներում:

դ) Արտաքին ներկայացուցչություն և այլ պարտականություններ.

- Խորհրդի անունից կնքում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը,
- Խորհրդի անունից կնքում է գլխավոր գործադիր տնօրենի աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ Խորհրդի որոշմամբ սահմանված կարգով,
- նախագահում է Ընդհանուր ժողովում,
- իրականացնում է Կանոնակարգով, Բանկի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

8.4. Բացի Կանոնակարգով սահմանված դեպքերից, Խորհրդի նախագահը չպետք է Բանկում զբաղեցնի այլ վարձատրվող պաշտոն:

### **9. ԽՈՐՀՐԴԻ ԱՎԱԳ ԱՆԿԱԽ ԱՆԴԱՄԸ**

9.1. Խորհուրդը ընտրում է իր անկախ անդամներից մեկին որպես Խորհրդի ավագ անկախ անդամ:

9.2. Ավագ անկախ անդամն ընտրվում է Խորհրդի անկախ անդամների թվի ձայների մեծամասնությամբ:

9.3. Ավագ անկախ անդամը հանդիսանում է հաղորդակցության լրացուցիչ օղակ՝ Խորհրդի նախագահի, մյուս անդամների, գործադիր ղեկավարության և բաժնետերերի միջև:

9.4. Ավագ անկախ անդամը՝

ա) Խորհրդի ղեկավարման հետ կապված հարցերով Խորհրդի նախագահին տրամադրում է աջակցություն և կառուցողական կարծիք,

բ) կառուցողական երկխոսության ապահովման նպատակով, անհրաժեշտության դեպքում, հանդես է գալիս որպես միջնորդ Խորհրդի նախագահի և մյուս անդամների միջև,

գ) հասանելի է լինում բաժնետերերի համար այն դեպքերում, երբ նրանք ունեն մտահոգություններ, որոնք չեն լուծել Խորհրդի նախագահի, գլխավոր գործադիր տնօրենի կամ այլ ղեկավարների միջոցով, կամ երբ այդպիսի շփումը նպատակահարմար չէ:

դ) Խորհրդի անկախ անդամների մասնակցությամբ տարեկան առնվազն մեկ անգամ կազմակերպում է փակ նիստ՝ Խորհրդի նախագահի աշխատանքը գնահատելու նպատակով,

ե) անհրաժեշտության դեպքում ղեկավարում է Խորհրդի նախագահի վերընտրությանը, իրավահաջորդությանը կամ վարքին վերաբերող քննարկումները,

զ) նպաստում է բաց և անկաշկանդ քննարկումների անցկացմանը և բարձրաձայնում է այն մտահոգությունները կամ հարցերը, որոնք անհատ Խորհրդի անդամները կարող են չցանկանալ ուղղակիորեն ներկայացնել Խորհրդի նախագահին,

է) աջակցում է Խորհրդի գործունեության ընդհանուր արդյունավետությանը՝ ամրապնդելով Խորհրդի անկախությունը և ապահովում է, որ Խորհրդի բոլոր անդամների կարծիքները լիարժեք լսելի լինեն,

ը) իրականացնում է սույն Կանոնակարգով սահմանված այլ գործառույթներ:

9.5. Ավագ անկախ անդամի պարտականությունների շրջանակը կարող է լրացուցիչ հստակեցվել Խորհրդի կողմից:

## **10. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ ՎԵՐՋԻՆԻՍ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

10.1. Խորհրդի նախագահի բացակայության, նրա կողմից իր պարտականությունների կատարումը անհնար լինելու կամ շահերի բախման իրավիճակների դեպքերում, այդ պարտականությունները ժամանակավորապես իրականացնում է Խորհրդի ավագ անկախ անդամը:

## **11. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ**

11.1. Խորհուրդը, հիմք ընդունելով Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովի առաջարկությունը, նշանակում է Կորպորատիվ քարտուղար:

11.2. Կորպորատիվ քարտուղարը, ի թիվս այլնի, աջակցում է Խորհրդին և կից հանձնաժողովներին իրենց իրավասությունների արդյունավետ իրականացման շրջանակներում՝ իրականացնելով հետևյալ պարտականությունները՝

1. աջակցում է Խորհրդի և կից հանձնաժողովների նիստերի նախապատրաստմանը, ժամանակացույցի կազմմանը և կազմակերպմանը,

2. ժամանակին պատրաստում և տարածում է Խորհրդի և կից հանձնաժողովների նիստերի օրակարգերը և կից փաստաթղթերը,

3. ապահովում է Խորհրդի և կից հանձնաժողովների նիստերի ճշգրիտ փաստաթղթավորումը, ներառյալ արձանագրությունների պատրաստումը և տարածումը,

4. պահպանում է Խորհրդի որոշումների և քաղաքականությունների մշտապես թարմացված ռեեստր,

5. աջակցում է Խորհրդի նոր անդամների ներգրավմանը, ինչպես նաև Խորհրդի անդամների շարունակական վերապատրաստումների կազմակերպմանը,

6. ապահովում է Խորհրդի գործընթացներին վերաբերող օրենսդրական և ներքին կանոններին համապատասխանություն, այդ թվում՝ շահերի բախման իրավիճակների արձանագրումը և կապված անձանց հետ կնքված գործարքների բացահայտումը,

7. աջակցում է Խորհրդի և գործադիր մարմնի, անհրաժեշտության դեպքում նաև Խորհրդի անդամների միջև արդյունավետ հաղորդակցությանը,

8. համագործակցելով Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովի հետ՝ համակարգում է Խորհրդի գործունեության գնահատման գործընթացը,

9. աջակցում է բաժնետերերի հետ հաղորդակցությանը և կորպորատիվ կառավարման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման նախապատրաստմանը,

10. պահպանում է Խորհրդի անդամների որակավորումների ռեեստր և հետևում է կանոնակարգային և կառավարման պահանջներին Խորհրդի կազմի համապատասխանությանը,

11. հետևում է կորպորատիվ կառավարմանը վերաբերող կանոնակարգերի և լավագույն փորձի զարգացումներին և Խորհրդին տրամադրում է համապատասխան խորհրդատվություն,

12. Կանոնակարգով կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում իրականացնում է այլ գործառույթներ:

11.3. Խորհրդի քարտուղարը վարում է Խորհրդի անդամների ռեեստրը, որը բաց է Բանկի բաժնետերերի ծանոթացման համար և Խորհրդի անդամների մասին պարունակում է օրենքով սահմանված տեղեկատվություն:

11.4. Կորպորատիվ քարտուղարը պետք է առանց սահմանափակումների հասանելիություն ստանա անհրաժեշտ տեղեկատվությանը և անհրաժեշտության դեպքում Խորհրդի նախագահի կամ Խորհրդի առջև իրավասու է բարձրացնել կառավարման հետ կապված մտահոգություններ:

## ԲԱԺԻՆ 4. ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

### 12. ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

12.1. Խորհրդի իրավասությունների իրականացմանն աջակցելու նպատակով Խորհրդին կից ստեղծվում են հանձնաժողովներ: Հանձնաժողովները գործում են Կանոնակարգով, Խորհրդի կողմից ընդունված համապատասխան հանձնաժողովի կանոնադրությամբ, Կորպորատիվ կառավարման կանոնագրքով, ինչպես նաև գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, որոնք սահմանում են հանձնաժողովների կազմը, իրավասությունները և գործառույթները:

12.2. Խորհրդին կից գործող մշտական հանձնաժողովներն են Աուդիտի, Ռիսկերի կառավարման, Կառավարման, նշանակումների և վարձատրությունների, և Ռազմավարության հանձնաժողովները:

12.3. Բացառությամբ Աուդիտի հանձնաժողովի, որը ստեղծվում է օրենքի պահանջով, Խորհուրդը կարող է, ըստ անհրաժեշտության, ստեղծել այլ մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ կամ լուծարել գործող հանձնաժողովները՝ հիմք ընդունելով Բանկի ռազմավարական և կառավարման առաջնահերթությունները:

12.4. Յուրաքանչյուր հանձնաժողովի ստեղծման կարգը, կազմը, իրավասության շրջանակն ու գործառույթները, հաշվետվողականությանը վերաբերող պարտավորությունները և գործունեության ընթացակարգերը, եթե դրանք տարբերվում են սույն Կանոնակարգում սահմանվածից, սահմանվում են Խորհրդի կողմից ընդունված համապատասխան հանձնաժողովի կանոնադրությամբ:

12.5. Հանձնաժողովները հանդես են գալիս որպես խորհրդատվական մարմիններ և չունեն որոշումներ ընդունելու իրավասություն, բացառությամբ եթե նման իրավասություն հանձնաժողովին վերապահել է Խորհուրդը՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

### 13. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

13.1. Հանձնաժողովների վրա տարածվում են գործունեության հետևյալ չափանիշները՝

1. **Տարեկան ինքնագնահատում և վերանայում.** հանձնաժողովը պետք է պարբերաբար գնահատի իր գործունեության արդյունավետությունը, այդ թվում՝ հանձնաժողովին տրամադրվող տեղեկատվության ամբողջականությունն ու համապատասխանությունը: Հիմք ընդունելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը կարող է Խորհրդին առաջարկել համապատասխան բարելավումներ:

2. **Փաստաթղթավորում և հաշվետվությունների ներկայացում.** հանձնաժողովի նիստի վերաբերյալ պետք է վարվի արձանագրություն, որը ներկայացվում է Խորհրդին: Հանձնաժողովը պետք է պարբերաբար հաշվետվություն ներկայացնի Խորհրդին իր գործունեության վերաբերյալ և ներկայացնի առաջարկություններ՝ բարելավումների համար անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ:

3. **Տեղեկատվությանը և ռեսուրսներին հասանելիություն.** հանձնաժողովը իրավունք ունի պահանջել և ստանալ իր իրավասություններն արդյունավետ իրականացնելու համար պահանջվող ցանկացած տեղեկատվություն կամ փաստաթուղթ, ինչպես նաև ներգրավել անկախ խորհրդատուներ, մասնագետներ կամ փորձագետներ և անհրաժեշտության դեպքում հասանելիություն ունենալ Բանկի ռեսուրսներին:

4. **Հանձնաժողովների միջև համագործակցությունը.** հանձնաժողովը պետք է համագործակցի Խորհրդի մյուս հանձնաժողովների հետ՝ իրավասությունների հնարավոր համընկնումները կամ բացթողումները բացահայտելու և այդ խնդիրներին արձագանքելու համար: Հանձնաժողովի փոխգործակցությունը պետք է արտացոլվի հանձնաժողովի աշխատանքային պլանում և տարեկան ծրագրում:

5. **Շահերի բախում և գաղտնիություն.** հանձնաժողովների անդամները պարտավոր են մշտապես պահպանել Բանկի շահերի բախման և գաղտնիության պահանջները:

6. **Իրավական և կարգավորող պահանջներին համապատասխանություն.** հանձնաժողովը պարտավոր է իր գործունեության ընթացքում հաշվի առնել գործող օրենքները և այլ կարգավորումներ, որոնք կիրառվել են հանձնաժողովի գործունեության նկատմամբ:

#### **14. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

14.1. Յուրաքանչյուր հանձնաժողով պետք է բաղկացած լինի առնվազն երեք անդամից, որոնք նշանակվում են Խորհրդի կողմից:

14.2. Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի Խորհրդի անկախ անդամ. Խորհրդի նախագահի և Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

14.3. Մյուս հանձնաժողովների նախագահները, ըստ Խորհրդի հայեցողության, կարող են լինել անկախ անդամներ:

14.4. Աուդիտի հանձնաժողովի առնվազն մեկ անդամ պետք է ունենա արդի և համապատասխան փորձառություն ֆինանսների, աուդիտի կամ հաշվապահության ոլորտներում: Խորհուրդը նշանակում է մյուս հանձնաժողովների անդամներին՝ հաշվի առնելով նրանց փորձը, ոլորտային գիտելիքները և հանձնաժողովի նպատակների իրականացմանը նպաստելու կարողությունը:

#### **15. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԸ և ՔՎՈՐՈՒՄԸ**

15.1. Յուրաքանչյուր հանձնաժողովի նիստերը գումարվում են բավարար ժամանակ առաջ ծանուցվելու պայմանով, համապատասխան հանձնաժողովի կողմից որոշված հաճախականությամբ և ժամանակահատվածում:

15.2. Յուրաքանչյուր հանձնաժողովի նիստ անհրաժեշտության դեպքում կարող է գումարվել տվյալ հանձնաժողովի նախագահի, հանձնաժողովի ցանկացած անդամի կամ Խորհրդի նախագահի կողմից:

15.3. Նիստերի քվորումը առկա է երկու անդամի, ներառյալ՝ համապատասխան հանձնաժողովի նախագահի (կամ հանձնաժողովի անդամներից ընտրված՝ վերջինիս պատվիրակի) մասնակցության դեպքում: Հանձնաժողովի որոշումները ընդունվում են ներկաների ձայների մեծամասնությամբ, եթե հանձնաժողովի կանոնադրությամբ կամ կիրառելի օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

15.4. Նիստի օրակարգը և կից նյութերը յուրաքանչյուր նիստից առաջ պետք է նախապես տրամադրվեն հանձնաժողովի անդամներին:

15.5. Ակնկալվում է, որ հանձնաժողովների անդամները անձամբ կմասնակցեն հանձնաժողովների նիստերին, սակայն անհրաժեշտության դեպքում թույլատրվում է մասնակցությունը հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ:

15.6. Խորհրդի քարտուղարը կամ վերջինիս պատվիրակը հանդես է գալիս որպես յուրաքանչյուր հանձնաժողովի քարտուղար և պատասխանատու է նիստերի արձանագրությունների, որոշումների և հաշվետվությունների պահպանման համար, ինչպես նաև ապահովում է, որ դրանք ժամանակին ներկայացվեն Խորհրդին:

15.7. Յուրաքանչյուր Հանձնաժողով անհրաժեշտության դեպքում և իր պարտականությունները արդյունավետ կերպով կատարելու նպատակով իրավասու է իր նիստերին հրավիրել գործադիր մարմնի անդամների, խորհրդատուների կամ այլ համապատասխան կողմերի:

15.8. Աուդիտի հանձնաժողովը տարեկան առնվազն երկու անգամ պետք է առանձին հանդիպի արտաքին աուդիտորի և ներքին աուդիտի ղեկավարի հետ:

## **16. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

16.1. Յուրաքանչյուր հանձնաժողով պետք է Խորհրդի կողմից ընտրված նախագահ ունենա:

16.2. Յուրաքանչյուր հանձնաժողովի նախագահ պատասխանատու է համապատասխան հանձնաժողովի արդյունավետ գործունեության ապահովման և իրավասությունների պատշաճ իրականացումը երաշխավորելու համար: Հանձնաժողովի նախագահը՝

ա) ղեկավարում և կազմակերպում է հանձնաժողովի նիստերը՝ խթանելով բաց, ներառական և, անհրաժեշտության դեպքում, քննադատական քննարկումներ,

բ) ապահովում է անհրաժեշտ տեղեկատվության մատչելիություն և բավարար ուշադրություն հանձնաժողովի իրավասության ներքո գտնվող հարցերին,

գ) Խորհրդին զեկուցում է հանձնաժողովի գործունեության, որոշումների և առաջարկությունների վերաբերյալ,

դ) փոխգործակցում է Բանկի ղեկավարների և Խորհրդի մյուս հանձնաժողովների հետ՝ կորպորատիվ նպատակների և կառավարման ստանդարտների համադրումը ապահովելու նպատակով

ե) վերահսկում է համապատասխան հանձնաժողովի ոլորտին առնչվող գործառույթների (օրինակ՝ ներքին աուդիտի, ռիսկերի և համապատասխանության, ռազմավարության կամ կառավարման) անկախությունը և արդյունավետությունը,

զ) հանդես է գալիս որպես կապող օղակ հանձնաժողովի, Բանկի ղեկավարների և Խորհրդի միջև և գլխավոր գործադիր տնօրենի խնդրանքով կարող է գումարել համապատասխան հանձնաժողովի նիստ:

## **ԲԱԺԻՆ 5. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ**

### **17. ՆԻՍՏԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ և ԴՐԱՆՑ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

17.1. Խորհրդի նիստերը գումարվում են իր իրավասությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ հաճախականությամբ, սակայն ոչ պակաս, քան յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ:

17.2. Լրացուցիչ նիստեր կարող են գումարվել Խորհրդի նախագահի, Խորհրդի անդամի, գլխավոր գործադիր տնօրենի, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի Խորհրդի, ինչպես նաև բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի գրավոր պահանջով:

17.3. Խորհրդի անդամները պետք է հնարավորության դեպքում ֆիզիկապես մասնակցեն նիստերին, և ակնկալվում է, որ Խորհրդի յուրաքանչյուր անդամ այդ եղանակով կմասնակցի տարվա ընթացքում անցկացվող նիստերի առնվազն 75 տոկոսին:

17.4. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն գլխավոր գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ, երբ քննարկվում է գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատմանը վերաբերող հարցեր:

17.5. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել հեռահաղորդակցության միջոցներով՝ բացառությամբ Բանկի կանոնադրությամբ սահմանված դեպքերի:

17.6. Ակնկալվում է, որ Խորհրդի հերթական նիստերը պլանավորվեն նախօրոք՝ բացառելու նիստերին մասնակցելու Խորհրդի անդամների անհատական պարտավորություններից բխող հնարավոր խոչընդոտները: Հաջորդ օրացույցային տարվա նիստերի տարեկան ժամանակացույցը Խորհրդի հաստատմանն է ներկայացվում, որպես կանոն, նախորդ տարվա հոկտեմբերից ոչ ուշ:

## 18. ՕՐԱԿԱՐԳԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ

18.1. **Օրակարգի նախապատրաստում.** Խորհրդի նախագահը, համագործակցելով գլխավոր գործադիր տնօրենի հետ և հաշվի առնելով համապատասխան իրավական պարտավորությունները, ռազմավարական առաջնահերթությունները, ինչպես նաև Խորհրդի անդամների առաջարկները և Խորհրդին կից հանձնաժողովների զեկույցները, սահմանում է Խորհրդի յուրաքանչյուր նիստի օրակարգը:

18.2. **Օրակարգում հարցեր ընդգրկելու առաջարկի իրավունք.** Խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի օրակարգում հարցեր ընդգրկելու առաջարկով հանդես գալ: Առաջարկները պետք է ներկայացվեն գրավոր՝ Խորհրդի նախագահին կամ Կորպորատիվ քարտուղարին՝ նախատեսված նիստից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օր առաջ:

18.3. **Օրակարգի վերջնականացում և շրջանառում.** վերջնական օրակարգը հաստատում է Խորհրդի նախագահը և շրջանառվում է Կորպորատիվ քարտուղարի կողմից՝ նիստի վերաբերյալ ծանուցման և կից նյութերի հետ միասին:

18.4. **Օժանդակ փաստաթղթեր.** Խորհրդին ներկայացվող բոլոր նյութերը պետք է պատրաստվեն կառուցվածքային ձևաչափով և պետք է, եթե այլ բան սահմանված չէ, ներառեն հետևյալ կետերը՝

ա) հարցի համառոտ նկարագրությունը,

բ) որոշման նախագիծը (տեքստային ձևով),

գ) հիմնավորումն ու վերլուծությունը, ներառյալ առավելությունները, ռիսկերը և հնարավոր այլընտրանքները,

դ) նախապատմությունն ու հիմնավորող փաստաթղթերը,

ե) հարցի ներկայացման համար նախատեսված մոտավոր ժամանակը:

18.5. **Նյութերի ժամանակին տրամադրում.** Խորհրդի քննարկման համար անհրաժեշտ բոլոր նյութերը պետք է տրամադրվեն Խորհրդի անդամներին նիստից առնվազն տասը աշխատանքային օր առաջ, բացառությամբ եթե քննարկման առարկա հարցը հրատապ է և Խորհրդի նախագահի կողմից հաստատված է ուշ ներկայացման ժամկետ:

18.6. **Ուշ ներկայացված և անհետաձգելի փաստաթղթեր.** բացառիկ դեպքերում, Խորհրդի նախագահի համաձայնությամբ, լրացուցիչ նյութեր կարող են ներկայացվել նաև սահմանված վերջնաժամկետից հետո: Դրանք պետք է հստակ նշվեն որպես «ուշ ներկայացված» և կարող են քննարկվել միայն նիստին ներկա Խորհրդի անդամների մեծամասնության համաձայնության դեպքում:

18.7. **Գաղտնիություն.** օրակարգի բոլոր նյութերն ու փաստաթղթերը, որոնք տրամադրվում են Խորհրդի անդամներին, պետք է դիտարկվեն որպես գաղտնի և օգտագործվեն բացառապես նրանց հավատարմագրային պարտականությունների իրականացման նպատակով:

## 19. ՔՎՈՐՈՒՄԸ և ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

19.1. **Քվորում.** Խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե ներկա է Խորհրդի անդամների կեսից ավելին, եթե այլ բան սահմանված չէ կիրառելի օրենսդրությամբ կամ Բանկի կանոնադրությամբ:

19.2. **Հեռավար մասնակցություն.** քվորում ապահովելու և քվեարկության նպատակով՝ ծրագրային և հավելվածային հարթակների միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում, մասնակցությունը համարվում է համարժեք ֆիզիկական ներկայությանը, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

19.3. **Անձամբ մասնակցության պահանջ.** ներկայացուցչի կամ պատվիրակի միջոցով քվեարկությունն արգելված է: Խորհրդի յուրաքանչյուր անդամ քվեարկելու իր իրավունքը պետք է անձամբ իրացնի:

19.4. **Քվեարկության ընթացակարգը.** եթե օրենքով, Բանկի Կանոնադրությամբ կամ Կանոնակարգով այլ բան նախատեսված չէ, ապա Խորհրդի որոշումները ընդունվում են նիստին մասնակցող Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

19.5. **Հրաժարում և ինքնաբացարկ.** քվեարկությունից հրաժարված կամ շահերի բախման պատճառով ինքնաբացարկ ներկայացրած Խորհրդի անդամը տվյալ հարցի վերաբերյալ ձայների մեծամասնության հաշվարկի նպատակով չի ներառվում քվեարկող անդամների թվում:

19.6. **Գրավոր ընթացակարգով ընդունված որոշումներ.** Խորհուրդը կարող է ընդունել որոշումներ գրավոր (շրջանառվող) ընթացակարգով, եթե նման ընթացակարգը արգելված չէ օրենքով կամ որոշման ընդունման հնարավորությունը սահմանափակված չէ միայն ֆիզիկական մասնակցությամբ նիստերով: Նման դեպքերում կիրառվում են քվորումի և քվեարկության նույն կանոնները:

## 20. ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ

20.1. Խորհրդի քարտուղարը յուրաքանչյուր նիստի վերաբերյալ պետք է կազմի արձանագրություն՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Արձանագրությունը կազմվում է նիստից հետո տասնօրյա ժամկետում:

20.2. Խորհրդի նիստի արձանագրությունը պետք է ճշգրիտ արտացոլի նիստում ընդունված որոշումները, որը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները՝ նիստից հետո տասնօրյա ժամկետում: Արձանագրությունը համարվում է պատշաճ ստորագրված, եթե այն ձեռքով ստորագրվում է կամ գրավոր հաստատվում է Խորհրդի անդամների ռեեստրում գրանցված էլեկտրոնային փոստի միջոցով Խորհրդի անդամի կողմից և ուղարկվում է կորպորատիվ քարտուղարի էլեկտրոնային փոստին: Խորհրդի անդամները այդպիսով պատասխանատվություն են կրում արձանագրության մեջ առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

20.3. Արձանագրությունը պետք է ներառի՝

1. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
2. նիստին մասնակցած, բացակայող, ինչպես նաև հեռավար մասնակցող Խորհրդի անդամի տվյալները,
3. նիստին այլ մասնակիցների տվյալները,
4. նիստի օրակարգը,
5. յուրաքանչյուր որոշման հիմնական դրույթների և հիմնավորման համառոտ ամփոփումը,
6. ցանկացած տարբերվող կարծիք կամ մեկնաբանություն, որի արձանագրումը հստակ պահանջվել է,
7. նիստում ընդունված որոշումները և քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր Խորհրդի անդամի,
8. հղում՝ նիստին ներկայացված ցանկացած նյութի,
9. նիստում ընդունված որոշումները:

20.4. Արձանագրություններում մասնակիցների արտահայտած կարծիքները չեն վերագրվում կոնկրետ անդամներին՝ եթե միայն դա հատուկ ձևով չի պահանջվել կամ անհրաժեշտ չի համարվում:

20.5. **Շահերի բախում և գաղտնի հավելվածներ.** Եթե Խորհրդի անդամը շահերի բախման պատճառով հրաժարվում է մասնակցել քննարկմանը, ապա նրա անունը չպետք է նշվի ընդհանուր արձանագրության մեջ: Նման դեպքերում Խորհրդի նախագահի (կամ՝ եթե շահերի բախման մեջ հայտնվածը Խորհրդի նախագահն է՝ Խորհրդի ավագ անկախ անդամի) վերահսկողության ներքո կարող է պատրաստվել գաղտնի հավելված: Նման հավելվածը ստորագրվում է միայն քննարկմանը մասնակցած անդամների կողմից և չի տրամադրվում շահերի բախման մեջ հայտնված անդամներին:

20.6. **Գաղտնի արձանագրություններ.** Զգայուն հարցերը, ներառյալ շահերի բախման դեպքերն ու վարձատրության հետ կապված քննարկումները, արձանագրվում են առանձին գաղտնի արձանագրություններում: Ընդհանուր արձանագրությունում նշվում է գաղտնի քննարկման մասին՝ առանց դրա բովանդակությունը բացահայտելու: Գաղտնի արձանագրությունները հասանելի են միայն նիստին մասնակցած Խորհրդի անդամներին և ստորագրվում են բացառապես այդ անդամների կողմից:

20.7. **Քննարկման մանրամասների տարանջատում.** Թափանցիկությունն ու կառավարման հարմարավետությունն ապահովելու նպատակով ընդհանուր/հիմնական արձանագրությունը պետք է կենտրոնանա ընդունված որոշումների և հիմնական քննարկված կետերի վրա: Քննարկման առավել մանրամասն տարրերը կարող են ներառվել հավելվածում, իսկ արձանագրության հիմնական տեքստը պետք է համառոտ լինի:

20.8. **Աուդիո ձայնագրություններ.** Ըստ նպատակահարմարության, նիստերի ընթացքում կարող են կատարվել աուդիո ձայնագրություններ՝ որպես հղում կամ հավելված արձանագրությանը: Նման ձայնագրությունները չեն փոխարինում գրավոր արձանագրությանը, բայց կարող են աջակցել փաստաթղթավորման գործընթացին:

20.9. **Հավաստիության համար պատասխանատվություն.** Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

20.10. **Հանձնաժողովների արձանագրությունները.** Խորհրդին կից հանձնաժողովների նիստերի արձանագրությունները ղեկավարվում են նույն սկզբունքներով և ներկայացվում են Խորհրդին՝ ըստ նպատակահարմարության:

## **ԲԱԺԻՆ 6. ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

### **21. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

21.1. Խորհրդի կազմը, այդ թվում Խորհրդի անդամների թիվը, սահմանվում է Բանկի Կանոնադրությամբ:

21.2. Խորհրդի անդամները ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից՝ կիրառելի օրենսդրությամբ և Բանկի Կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամի թեկնածությունների ներկայացումը Ընդհանուր ժողովին իրականացվում է Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովի առաջարկության և Խորհրդի պաշտոնական հաստատման հիման վրա: Այս գործընթացը սպասվում է, որ Խորհրդում առաջադրված բոլոր թեկնածուները բավարարեն կիրառելի օրենսդրությամբ և ներքին քաղաքականություններով սահմանված մասնագիտական, էթիկական և համապատասխանության պահանջներին:

### **22. ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ**

22.1. **Արժանիքահեն և համապատասխանության վրա հիմնված առաջադրում.** թեկնածուները առաջադրվում են հիմք ընդունելով մասնագիտական փորձը, բարեխղճությունը, առաջնորդման հմտությունները, ռազմավարական մտածողությունը և օրենսդրությամբ ու ներքին քաղաքականություններով սահմանված այլ համապատասխանության չափանիշները:

22.2. **Թափանցիկություն և օբյեկտիվություն.** թեկնածուների առաջադրման գործընթացը պետք է լինի թափանցիկ, կառուցվածքային և գերծ կողմնակալությունից կամ անհարկի ազդեցությունից: Գնահատման չափանիշներն ու ընթացակարգերը պետք է փաստաթղթավորվեն և հետևողականորեն կիրառվեն:

22.3. **Համապատասխանություն Բանկի ռազմավարությանը.** Խորհրդի կազմը պետք է աջակցի Բանկի երկարաժամկետ ռազմավարությանը, ռիսկի պրոֆիլին և կառավարման կարիքներին, որը պարբերաբար գնահատվում է Խորհրդի կողմից:

22.4. **Անկախություն.** գործընթացը պետք է ապահովի անկախ Խորհրդի անդամների պատշաճ բացահայտումն ու առաջադրումը՝ իրավական և կառավարման պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով բաժնետերերի միջև համաձայնեցված համատեղ առաջադրման պահանջները:

22.5. **Բազմազանություն և հավասարակշռություն.** Խորհրդի կազմը պետք է արտացոլի տեսակետների հավասարակշռություն, այդ թվում՝ մասնագիտական փորձը, սեռը, տարիքը և բազմազանության այլ չափանիշներ, որոնք համապատասխանում են արդյունավետ կառավարմանը:

## 23. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

23.1. Խորհուրդը պետք է պարբերաբար գնահատի իր ներկա և ապագա կազմը՝ Բանկի ռազմավարական նպատակների, ռիսկի պրոֆիլի և կառավարման պարտավորությունների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Այս գնահատման ընթացքում պետք է հաշվի առնել՝

- ա) Բանկի ռազմավարական առաջնահերթությունները և ի հայտ եկող մարտահրավերները,
- բ) իրավական և կարգավորող զարգացումները, ինչպես նաև շահակիցների ակնկալիքները,
- գ) Խորհրդի գնահատման և խորհրդի անդամների կատարողականի արդյունքները:

23.2. Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովը պետք է աջակցի կարիքների գնահատման գործընթացին և առաջարկի համապատասխան փոփոխություններ հմտությունների, փորձի և անկախության ցանկալի համադրության վերաբերյալ: Արդյունքները, իրենց հերթին, պետք է ուղղորդող նշանակություն ունենան խորհրդի հմտությունների մատրիցայի վերանայման և առաջադրման ու իրավահաջորդության վերաբերյալ որոշումների համար:

## 24. ԽՈՐՀՐԴԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՐԻՑԱՆ

24.1. Խորհուրդը պետք է մշակի և պահպանի Խորհրդի հմտությունների մատրիցա՝ արդյունավետ վերահսկողության և ռազմավարական ուղղորդման համար անհրաժեշտ կոլեկտիվ հմտությունների, փորձի, անկախության և բազմազանության բացահայտման նպատակով: Խորհրդի հմտությունների մատրիցան պետք է՝

ա) հաշվի առնի առաջադրումների, վերանշանակումների և իրավահաջորդության պլանավորման համար;

բ) արտացոլի Բանկի զարգացող ռազմավարական և կառավարման կարիքները;

24.2. Խորհրդի հմտությունների մատրիցան մշակվում և պահպանում է հետևյալ սկզբունքներով.

1. **Ռազմավարական համադրում**՝ արտացոլելու Բանկի ռազմավարական առաջնահերթությունները, բիզնես մոդելը և ռիսկի ախորժակը՝ ապահովելու որ Խորհուրդը արդյունավետ վերահսկի թե՛ ընթացիկ գործունեությունը, և թե՛ ապագա դիրքավորումը:

2. **Հմտությունների հավասարակշռված բաշխում**՝ ապահովելու հմտությունների օպտիմալ համադրություն՝ խուսափելով ինչպես գերկենտրոնացումից, այնպես էլ թերի ներկայացվածությունից՝ առանցքային ոլորտների համար հստակ շեմեր սահմանելով:

3. **Հիմնական և մասնագիտացված հմտություններ**. տարբերակելով ըստ՝ ունիվերսալ հմտությունների, որոնք ակնկալվում են բոլոր անդամներից, բանկային և կառավարման հիմնական հմտությունների, որոնք անհրաժեշտ են Խորհրդի լայն շրջանակի համար և մասնագիտացված ոլորտներում հմտությունների (օրինակ՝ կիբեռանվտանգություն, ԲՍԿ (բնապահպանական, սոցիալական և կառավարում), թվային վերափոխում), որոնք պահանջում են թիրախային փորձագիտություն:

4. **Համատեղ և անհատական քարտեզագրում**՝ հնարավորություն տալու թե՛ Խորհրդի ամբողջական, և թե՛ անհատական մակարդակով հմտությունների քարտեզագրման:

5. **Հեռանկարի գնահատում**՝ կանխատեսելու նոր զարգացող կարիքները, ինչպես օրինակ՝ տեխնոլոգիական նորարարությունը, բանկի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի փոփոխությունները և շահակիցների փոփոխվող ակնկալիքները:

6. **Բազմազանության ինտեգրում**՝ մասնագիտական փորձի հաշվառմամբ խթանելու ճանաչողական և փորձառությանը վերաբերող բազմազանությունը:

7. **Օբյեկտիվ և չափելի գնահատում**՝ կիրառելու ստանդարտացված չափորոշիչներ և հստակ սահմանված գիտելիքների մակարդակներ՝ թափանցիկ գնահատման և բացերի վերլուծության համար:

24.3. Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովը պետք է կանոնավոր կերպով վերանայի և թարմացնի Խորհրդի հմտությունների մատրիցան, և Խորհրդի հաստատմանը ներկայացնի համապատասխան փոփոխություններ՝ Խորհրդի հավասարակշռությունը և համապատասխանությունը ապահովելու նպատակով:

## **25. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

25.1. Խորհրդի անդամության թեկնածուները կարող են բացահայտվել բաժնետերերի առաջադրումների, մասնագիտական ցանցերի, արտաքին խորհրդատուների կամ այլ համապատասխան ուղիների միջոցով: Բոլոր թեկնածուները պետք է ենթարկվեն կառուցվածքային գնահատման, որը համապատասխանեցված է պատշաճության և համապատասխանության պահանջներին և Բանկի ռազմավարական ու կառավարման կարիքներին:

25.2. Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովը պետք է գնահատի թեկնածուներին՝ հիմնվելով Խորհրդի հմտությունների մատրիցայի, անկախության պահանջների և էթիկական չափանիշների վրա: Սա ներառում է մասնագիտական ուղու, որակավորումների, շահերի հավանական բախումների և Բանկի արժեքների հետ համապատասխանության վերանայում:

25.3. Գնահատումից հետո համապատասխան հանձնաժողովը Խորհրդին պետք է առաջարկի թեկնածուների նախնական ցանկ: Խորհուրդը պետք է հաստատի առաջադրվողների վերջնական ցանկը, որը պետք է ներկայացվի Ընդհանուր ժողովին՝ գործող օրենսդրությանը և Բանկի կանոնադրությանը համապատասխան:

## **26. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ**

26.1. Խորհրդի անդամները ընտրվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված ժամկետով, սակայն ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

26.2. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետի ավարտից հետո, կամավոր՝ գրավոր հրաժարական ներկայացնելու դեպքում կամ գործող օրենսդրությամբ սահմանված հիմքերով և ընթացակարգով Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման արդյունքում:

26.3. Խորհրդի անդամները կարող են վերընտրվել իրենց լիազորությունների ժամկետի ավարտից հետո, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Բանկի Կանոնադրությամբ:

26.4. Ընդհանուր ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են եթե՝

1. նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2. նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար),

3. նա մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ նիստերի առնվազն կեսից՝ անկախ բացակայության պատճառից: Բանկի կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն,

4. նա օրենքով սահմանված կարգով որակագրվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

26.5. Բացի վերոնշյալ դեպքերից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

1. Խորհրդի անդամի դիմումի համաձայն,

2. Խորհրդի անդամի մահվան դեպքում:

26.6. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Ընդհանուր ժողովի կողմից՝ Կանոնակարգի 39.1 ենթակետով սահմանված կարգով փոխհատուցում վճարելու պայմանով:

## **27. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ**

27.1. Խորհուրդը՝ նախաձեռնողական իրավահաջորդության պլանավորման միջոցով, պետք է ապահովի իր ղեկավարության շարունակականությունն ու արդյունավետությունը: Իրավահաջորդության պլանավորումը նպատակ ունի՝

ա) կանխատեսել և նախապատրաստվել Խորհրդի կազմի ապագա կարիքներին,

բ) ապահովել պլանավորված և չպլանավորված թափուր տեղերի համար համապատասխան թեկնածուների ժամանակին բացահայտումը,

գ) ապահովել հմտությունների, անկախության և բազմազանության հավասարակշռությունը:

27.2. Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովը պետք է վերահսկի իրավահաջորդության պլանավորման գործընթացը, այդ թվում՝ հնարավոր իրավահաջորդների գնահատումը, զարգացման նկատառումները և առաջադրման ժամկետների համակարգումը: Իրավահաջորդության պլանները պետք է կանոնավոր կերպով վերանայվեն և թարմացվեն՝ հիմնվելով Խորհրդի գնահատման, լիազորությունների ժամկետի ավարտի և ռազմավարական զարգացումների վրա:

27.3. Չպլանավորված թափուր տեղերի կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովը պետք է աջակցի ժամանակավոր կամ փոխարինող թեկնածուների ժամանակին բացահայտմանը և առաջադրմանը՝ համաձայն սույն Կանոնակարգով, Բանկի կանոնադրությամբ և Բանկի ներքին կարգավորումներով սահմանված ընթացակարգերի:

## **ԲԱԺԻՆ 7. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

### **28. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

28.1. Խորհրդի անդամները պարտավոր են գործել բարեխղճորեն՝ Բանկի, նրա բաժնետերերի և այլ շահակիցների լավագույն շահերին ծառայելու նպատակով՝ իրականացնելով իրենց լիազորությունները և պարտականությունները այնպիսի հոգատարությամբ, ջանասիրությամբ և կարողությամբ, ինչպիսին կդրսևորեր յուրաքանչյուր ոք համարժեք հանգամանքներում:

28.2. Խորհրդի անդամները պետք է հետևեն Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենսդրությանը, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքին, Կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնակարգերին, Կորպորատիվ կառավարման կանոնագրքին, Բանկի կանոնադրությանը, Կանոնակարգին, ինչպես նաև Բանկի ներքին իրավական այլ ակտերին:

### **29. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

29.1. Յուրաքանչյուր Խորհրդի անդամ իրավունք ունի՝

1. իր լիազորությունների իրականացման նպատակով Խորհրդի նախագահի և Խորհրդի քարտուղարի միջոցով պահանջել և ստանալ լիարժեք, ճշգրիտ և ժամանակին տեղեկատվություն,
2. առաջարկել հարցեր Խորհրդի նիստի օրակարգում ընդգրկելու համար և քննարկման ներկայացնել որոշումների նախագծեր,
3. արտահայտել իր կարծիքը և քվեարկել բոլոր այն հարցերի շուրջ, որոնք դրվում են Խորհրդի քննարկմանը,
4. պահանջել Խորհրդի արտահերթ նիստի գումարում՝ Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով,
5. Տարբերվող/հատուկ կարծիք հայտնել Խորհրդի որոշումների վերաբերյալ և պահանջել, որպեսզի իր տարբերվող/հատուկ կարծիքը ներառվի նիստի արձանագրության մեջ,
6. ստանալ վարձատրություն և փոխհատուցում՝ իր պարտականությունների կատարման ընթացքում կատարված ծախսերի համար՝ Ընդհանուր ժողովի որոշման հիման վրա,

7. իր լիազորությունները պատշաճ իրականացնելու նպատակով, անհրաժեշտության դեպքում Խորհրդի նախնական համաձայնությամբ, Բանկի միջոցների հաշվին ներգրավել արտաքին խորհրդատուների կամ փորձագետների,
8. մասնակցել մասնագիտական վերապատրաստումների և կարողությունների զարգացման ծրագրերի՝ խորհրդի անդամի դերի հետ առնչվող ոլորտներում,
9. հրաժարվել իր պաշտոնից՝ ներկայացնելով գրավոր ծանուցում Խորհրդի նախագահին:

### **30. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

30.1. Խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է՝

1. իր լիազորությունների շրջանակում գործել ելնելով Բանկի լավագույն շահերից,
2. իր իրավունքներն օգտագործել և պարտականությունները կատարել անհրաժեշտ հոգատարությամբ, բարեխղճորեն և պատշաճ կերպով,
3. տեղեկացված որոշումներ ընդունել՝ ուսումնասիրելով իրեն հասանելի ողջ տեղեկատվությունը,
4. բոլոր քննարկումների և որոշումների կայացման ընթացքում կիրառել անկախ դատողություն՝ առանց արտաքին ազդեցության,
5. տրամադրել բավարար ժամանակ և ուշադրություն իր լիազորությունների պատշաճ իրականացմանը՝ դրսևորելով անհրաժեշտ ջանասիրություն,
6. իր պարտականությունները իրականացնելիս դրսևորել պրոֆեսիոնալիզմ, արդյունավետություն և ռազմավարական մտածողություն,
7. խուսափել շահերի բախումից և անհապաղ տեղեկացնել Խորհրդին ցանկացած փաստացի կամ պոտենցիալ շահերի բախման իրավիճակի մասին,
8. չընդունել երրորդ անձանց կողմից տրված այնպիսի արտոնություններ կամ օգուտներ, որոնք կարող են դիտարկվել որպես ոչ ողջամիտ կամ կարող են հանգեցնել շահերի բախման Բանկի կամ նրա հետ փոխկապակցված անձանց հետ,
9. ապահովել նույն դասի բաժնետերերի նկատմամբ հավասար և արդար վերաբերմունք,
10. պահպանել չհրապարակված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը, ներառյալ Խորհրդում իր լիազորությունների դադարելուց հետո,
11. չօգտագործել Բանկի գույքը, տեղեկատվությունը կամ իր պաշտոնը անձնական շահի կամ Բանկի հետ մրցակցելու նպատակով,
12. Խորհրդին զեկուցել կիրառելի օրենսդրության, Բանկի կանոնադրության կամ սույն Կանոնակարգի խախտումների մասին, եթե այդպիսիք հայտնի դառնան նրան,
13. վերապատրաստումների և մասնագիտական զարգացման միջոցով շարունակաբար զարգացնել իր գիտելիքներն ու հմտությունները,
14. նպաստել Բանկի երկարաժամկետ հաջողությանը և աջակցել նրա ռազմավարական նպատակների ձևավորմանն ու իրագործմանը:

### **31. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

31.1. Բացի 30-րդ կետով սահմանված ընդհանուր պարտականություններից, որոնք ենթակա են կիրառման նաև Խորհրդի անկախ անդամների կողմից, այնքանով որքանով կիրառելի են («*mutatis mutandis*») վերջիններիս նկատմամբ, Խորհրդի անկախ անդամը պարտավոր է՝

1. զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել իր անկախությունը: Եթե անկախությունը այլևս չի գործում, Խորհրդի անկախ անդամը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Խորհրդին և բացահայտել պատճառները,

2. ապահովել, որ Խորհրդի անկախ անդամների մասին տեղեկատվությունն ու նրանց կողմից անկախության չափանիշների պահպանումը բացահայտված լինեն Բանկի Կորպորատիվ կառավարման հաշվետվության մեջ՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

## 32. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

32.1. **Փոխկապակցվածության արգելք.** Խորհրդի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք: Խորհրդի անդամները և Բանկի գործադիր մարմնի անդամները չեն կարող փոխկապակցված լինել: Սույն կետի իմաստով փոխկապակցվածությունը ներառում է ընտանեկան հարաբերությունները, նշանակալի ֆինանսական կամ գործարար կապերը, համատեղ սեփականության շահերը և ցանկացած այլ հարաբերություններ, որոնք ողջամտորեն կարող են համարվել անկախությունը կամ օբյեկտիվությունը վտանգող:

32.2. **Գործադիր մարմնից առանձնացում.** Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել Բանկի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից,

32.3. **Արտաքին նշանակումներ ֆինանսական հաստատություններում.** Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել Հայաստանի Հանրապետության այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ եթե Բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ ուղղակի կամ անուղղակի փոխկապակցված: Բանկի խմբի մեջ չմտնող այլ ֆինանսական հաստատությունների խորհրդի կազմում անդամակցության համար անհրաժեշտ է նախօրոք ստանալ Խորհրդի հաստատումը՝ հիմնված ժամանակային ներգրավվածության, ոլորտային ազդեցության և շահերի բախման հավանականության գնահատման վրա:

32.4. **Միաժամանակ մի քանի կազմերում ընդգրկվածություն.** Խորհրդի անդամը չպետք է զբաղեցնի այնպիսի քանակի Խորհրդի անդամի կամ համարժեք պաշտոններ այլ ընկերություններում կամ կազմակերպություններում, որը կարող է խոչընդոտել Բանկում իր պարտականությունների արդյունավետ իրականացմանը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ֆինանսական ծառայությունների մատուցման ոլորտում չափազանց մեծ թվով մանդատներից խուսափելուն:

32.5. **Ներքին վերահսկողական մարմիններում ներգրավվածություն.** Խորհրդի անդամը չի կարող լինել Բանկի Հաշվիչ հանձնաժողովի կամ այնպիսի այլ ներքին հսկողության մարմնի անդամ, որը կարող է խախտել վերահսկողության և կատարողականի տարանջատման սկզբունքը:

32.6. **Կանոնակարգային համապատասխանություն.** Խորհրդի անդամությանը վերաբերող բոլոր սահմանափակումները, որոնք սահմանված են գործող օրենքներով և կանոնակարգերով, այդ թվում՝ համապատասխանության և պատշաճության պահանջները, ենթակա են լիարժեք կիրառման՝ սույն ենթակետով սահմանված ավելի խիստ դրույթների հետ զուգահեռ:

## 33. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ

33.1. Խորհրդի անդամները պարտավոր են խուսափել այնպիսի իրավիճակներից, երբ նրանց անձնական շահերը հակասում են կամ կարող են հակասել Բանկի շահերին:

33.2. Խորհրդի անդամը պարտավոր է անհապաղ բացահայտել Խորհրդին իր անձնական շահագրգռվածությունը այն գործարքի կամ հարցի վերաբերյալ, որը հանդիսանում է Խորհրդի քննարկման առարկա: Բացահայտումը պետք է իրականացվի անհապաղ՝ Խորհրդի նախագահին և Կորպորատիվ քարտուղարին և փաստաթղթավորվի նիստի արձանագրության մեջ:

33.3. Շահերի բախման իրավիճակների դեպքում Խորհրդի անդամը պետք է չմասնակցի քննարկմանը կամ քվեարկությանը: Այդպիսի քննարկումների ընթացքում Խորհրդի նախագահը կարող է խնդրել տվյալ անդամին լքել նիստը և գործընթացի բարեվարքությունը ապահովելու նպատակով ձեռնարկել այլ ողջամիտ միջոցներ:

33.4. Շահերի բախման դեպքերը լրացուցիչ կարգավորվում են Բանկի համապատասխան ներքին քաղաքականությամբ, որը հաստատվում է Խորհրդի կողմից: Խորհրդի անդամները պարտավոր են ամբողջությամբ պահպանել տվյալ քաղաքականության պահանջները:

### **34. ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

34.1. Խորհրդի անդամները պատասխանատվություն են կրում Բանկի և Բանկի բաժնետերերի առաջ՝ իրենց դիտավորյալ գործողություններով/անգործությամբ, որոշումներով կիրառելի օրենսդրության, Բանկի կանոնադրության կամ Կանոնակարգի պահանջների խախտմամբ պատճառված իրական վնասի համար, ինչպես նաև Կանոնակարգի 35.2 ենթակետի 3-րդ մասով սահմանված դեպքերում:

34.2. Եթե Բանկին վնաս պատճառած արարքը իրականացրել են մեկից ավելի Խորհրդի անդամներ, ապա Խորհրդի անդամները կրում են համապարտ պատասխանատվություն:

34.3. Խորհրդի անդամը պետք է ազատվի պատասխանատվությունից, եթե վնաս պատճառած որոշման ընդունմանը դեմ է քվեարկել կամ նիստին ներկա չի գտնվել, որի ժամանակ ընդունվել է վնաս պատճառած որոշումը:

34.4. Առանց սահմանափակելու վերը նշված ընդհանուր դրույթները՝ Խորհրդի անդամների պատասխանատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակում հետևյալ դեպքերը.

ա) երբ Խորհուրդը հաստատում է այնպիսի գործարք, որը օրենքով ենթակա է Խորհրդի հաստատմանը, սակայն խախտում է մեկ փոխառուի, խոշոր փոխառուների, բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվներ, և այդ գործարքը հանգեցնում է Բանկի իրական վնասի,

բ) եթե Խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտել են օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի և բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, և հետագայում Բանկը կրել է նույն խախտումներով պայմանավորված վնաս, ապա Խորհրդի անդամները համապարտ պատասխանատվություն են կրում այդ իրական վնասների հատուցման համար, բացառությամբ, եթե Խորհրդի անդամն իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել է այդ խախտումները կանխելու ուղղությամբ բավարար և խելամիտ գործողություններ:

34.5. Խորհրդի անդամը չի ենթարկվում պատասխանատվության, եթե որոշումը կայացրել է ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով, և վերջինս արդարացիորեն համոզված է եղել, որ այն Բանկի լավագույն շահերին է ծառայելու, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները, նույնիսկ եթե հետագայում որոշումը հանգեցրել է վնասի:

34.6. Խորհրդի անդամի լիազորությունների իրականացման ընթացքում առաջացող պահանջների դեպքում վերջիններիս պաշտպանելու նպատակով Բանկը կարող է ձեռք բերել Խորհրդի անդամի պատասխանատվության ապահովագրություն, բացառությամբ դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ պատճառված վնասների համար:

34.7. Խորհրդի անդամի հրաժարականը կամ պաշտոնից ազատումը չի ազատում նրանց իրենց մեղքով իրենց լիազորությունների իրականացման ընթացքում Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից:

### **35. ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ**

35.1. Բացի Կանոնակարգով սահմանված դեպքերից և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված պատասխանատվության ընդհանուր կանոններից, Կենտրոնական Բանկը Խորհրդի անդամի նկատմամբ իրավասու է կիրառել Հայաստանի Հանրապետության «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով սահմանված պատժամիջոցներ:

35.2. Խորհրդի անդամի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ պատժամիջոցները՝

#### **1. Նախազգուշացում և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարական.**

Կենտրոնական բանկը իրավասու է կիրառել գրավոր նախազգուշացում՝ արձանագրելով կատարած խախտումը, ինչպես նաև տալ կատարման համար պարտադիր հանձնարարական՝ խախտումը սահմանված ժամկետում վերացնելու և/կամ դրա կրկնությունը կանխելու վերաբերյալ: Նախազգուշացումը կարող է կիրառվել Կանոնակարգի 34-րդ կետով նախատեսված յուրաքանչյուր խախտման դեպքում:

2. **Տուգանք.** Կենտրոնական բանկը Խորհրդի անդամի նկատմամբ իրավասու է կիրառել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը չգերազանցող գումարի չափով: Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի որոշմամբ, եթե Խորհրդի անդամը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Տուգանքը գանձվում է Խորհրդի անդամի անձնական միջոցներից՝ հոգուտ պետական բյուջեի: Տուգանքը կարող է կիրառվել Խորհրդի անդամի կողմից չհիմնավորված ռիսկային գործունեություն վարելու, մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի կամ բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը տրման պահին խախտելու (եթե այդպիսի որոշումը ընդունվել է Խորհրդի կողմից և Խորհրդի անդամը կողմ է քվեարկել այդ որոշմանը), Կենտրոնական բանկի վերստուգումներին խոչընդոտելու կամ օրենքով սահմանված կարգով տրված Կենտրոնական բանկի հանձնարարականները չկատարելու, օրենքները կամ այլ իրավական ակտերը խախտելու համար:

3. **Որակավորման վկայականից զրկելը.** Կենտրոնական բանկը իրավասու է զրկել Խորհրդի անդամին որակավորման վկայականից, եթե նա՝

- միտումնավոր կերպով խախտել է օրենքներն ու այլ իրավական ակտերը,
- պաշտոնավարման ընթացքում վարել է անհիմն և վտանգավոր գործունեություն, խոչընդոտել է վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին,
- կատարել է այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով Բանկը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս,
- գործունեության ընթացքում կատարել է անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ, որոնք հակասում են Բանկի կամ Բանկի հաճախորդների շահերին,
- անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք է դրսևորել իր ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ Բանկի և Բանկի հաճախորդների նկատմամբ ստանձնած հավատարմագրային պարտականությունների նկատմամբ,
- այլևս չի համապատասխանում Կենտրոնական բանկի կողմից սահմանված որակավորման չափանիշներին,
- չի կատարել Կենտրոնական բանկի հանձնարարականը կամ անտեսել է Կենտրոնական բանկի նախազգուշացումը:

35.3. Կենտրոնական բանկը իրավասու է Խորհրդի միևնույն անդամի նկատմամբ միաժամանակ կիրառել երկու կամ ավելի պատժամիջոցներ:

35.4. Սույն բաժնում նախատեսվող պատժամիջոցների կիրառումը Խորհրդին չի ազատում օրենքներով, այլ իրավական ակտերով և պայմանագրերով նախատեսված պատասխանատվությունից:

## **ԲԱԺԻՆ 8. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

### **36. ԽՈՐՀՐԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

36.1. Խորհուրդը պետք է պարբերաբար գնահատի իր, ինչպես նաև կից հանձնաժողովների, առանձին անդամների և Խորհրդի նախագահի գործունեությունը՝ շարունակական արդյունավետությունը, հաշվետվողականությունն ու առաջնորդման կարողությունը ապահովելու նպատակով:

36.2. **Խորհրդի գործունեության գնահատում.** Խորհուրդը իրականացնում է իր գործունեության տարեկան գնահատում, որն ընդգրկում է կառավարման հիմնական ոլորտները, այդ թվում՝ ռազմավարական վերահսկողությունը, ռիսկերի կառավարումը, որոշումների կայացումը, կազմը և նիստերի արդյունավետությունը: Գործունեության արտաքին անկախ գնահատումն իրականացվում է առնվազն հինգ տարին մեկ անգամ:

36.3. **Հանձնաժողովների գնահատում.** Յուրաքանչյուր հանձնաժողովի գործունեությունն ու արդիականությունը պարբերաբար վերանայվում է Խորհրդի կողմից՝ որպես ընդհանուր կառավարման գնահատման մի մաս:

36.4. **Անհատական գնահատում.** Խորհրդի յուրաքանչյուր անդամի գործունեությունը ենթակա է տարեկան գնահատման՝ հաստատելու վերջինիս շարունակական համապատասխանությունը, ներգրավվածությունն ու ներդրումը Խորհրդի աշխատանքներում: Գնահատումը կարող է ներառել ինքնագնահատումը, գործընկերների կարծիքները և գլխավոր գործադիր տնօրենի կարծիքը:

36.5. **Խորհրդի նախագահի գնահատում.** Խորհրդի նախագահի գործունեությունը ենթակա է տարեկան գնահատման, որը ղեկավարում է Խորհրդի ավագ անկախ անդամը: Գնահատման արդյունքները պետք է ծառայեն առաջնորդման և Խորհրդի արդյունավետության բարձրացման նպատակներին:

36.6. **Պաշտոնի ներկայացում (ինդոկցիա) և վերապատրաստում.** Բանկը Խորհրդի նոր անդամներին պետք է տրամադրի հատուկ մշակված ինդոկցիոն ծրագիր և ապահովի բոլոր անդամների շարունակական մասնագիտական զարգացումը: Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովը յուրաքանչյուր տարի վերանայում է վերապատրաստման առաջնահերթությունները, ինչի վերաբերյալ համապատասխան նշում է արվում վերապատրաստումների գրանցամատյանում:

## **ԲԱԺԻՆ 9. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ**

### **37. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

37.1. Խորհրդի անդամների վարձատրությունը պետք է լինի արդար, թափանցիկ, և համահունչ Բանկի երկարաժամկետ նպատակներին, ռիսկերի պրոֆիլին և շահակիցների սպասումներին: Այն պետք է նպաստի որակավորված մասնագետների ներգրավմանը և երկարաժամկետ աշխատանքին՝ միաժամանակ երաշխավորելով վերջիններիս անկախությունը ու օբյեկտիվությունը:

37.2. Խորհրդի անդամները պետք է ստանան հաստատուն վարձատրություն, որը արտահայտում է նրանց ժամանակային ներգրավվածությունն ու պատասխանատվության ծավալը: Խորհրդի անդամներին չի տրամադրվում արդյունքներից կախված կամ փոփոխական վարձատրություն: Խորհրդի բոլոր անդամների վարձատրությունը հավասար է բացառությամբ Խորհրդի և կից հանձնաժողովների նախագահների վարձատրության՝ ելնելով վերջիններիս վերապահված լրացուցիչ լիազորությունների շրջանակից: Խորհրդի անդամների մասնակցությունը վերապատրաստման և զարգացման միջոցառումներին ենթակա չէ առանձին հատուցման:

### **38. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ**

38.1. Խորհրդի անդամի վարձատրությունը բաղկացած է միայն հաստատուն բաղադրիչներից, ինչպիսիք են տարեկան հատկացումներն և/կամ նիստերին մասնակցության վճարները: Վարձատրության սխեման և դրա կառուցվածի վերաբերյալ առաջարկը Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովի առաջարկության հիման վրա ներկայացնում է Խորհուրդը և հաստատվում է Ընդհանուր ժողովի կողմից:

38.2. Խորհրդի նախագահը ստանում է հաստատուն վարձատրություն, որը արտացոլում է վերջինիս ընդլայնված պատասխանատվության շրջանակը, ընթացիկ գործառույթներն ու աշխատանքային ծանրաբեռնվածությունը: Խորհրդի նախագահին կարող են տրամադրվել նաև ոչ ֆինանսական արտոնություններ, օրինակ՝ վարչական ռեսուրսներ, գրասենյակային տարածքի օգտագործման իրավունք կամ այլ աջակցման ձևեր: Նման արտոնությունների ծավալն ու բնույթը պետք է համապատասխանի Խորհրդի նախագահի պատասխանատվության շրջանակին և հաստատվի Բանկի ներքին կառավարման ընթացակարգերին համապատասխան:

38.3. Խորհրդի անդամները կարող են վարձատրվել ռազմավարական սեմինարներին, հատուկ նիստերին մասնակցության համար նույն կարգով, ինչպես Խորհրդի կամ հանձնաժողովի նիստերի դեպքում՝ Խորհրդի համար սահմանված բյուջեի սահմաններում:

38.4. Խորհրդի անդամների աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում ծագած ողջամիտ և փաստաթղթավորված ճանապարհային և կեցության ծախսերը փոխհատուցվում են Բանկի ներքին ընթացակարգերին համապատասխան: Բացի ծախսերի փոխհատուցումից, Խորհրդի անդամներին կարող է վճարվել նաև հաստատուն ճանապարհային փոխհատուցում՝ ճանապարհորդության հետ կապված ծախսած ժամանակի, պատճառված անհարմարության և ներդրված ջանքերի համար:

### **39. ԽՈՐՀՐԴԻ ԱՆՊԱՄԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՊԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

39.1. Այն դեպքերում, երբ Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ, ապա նրան տրամադրվում է վարձատրություն՝ մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը: Եթե մնացած ժամկետը մեկ տարուց ավելի է, ապա նրան հատկացվում է մեկ տարվա չափով վարձատրություն՝ ներառյալ համապատասխանաբար Խորհրդի և հանձնաժողովների նիստերի մասնակցության վճարներն ու հաստատուն վճարը:

39.2. Բանկն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

39.3. Պաշտոնավարման ժամկետը լրանալու հիմքով Խորհրդի անդամի լիազորությունները դադարելու դեպքում Խորհրդի որոշմամբ Խորհրդի անդամը կարող է պարգևատրվել մինչև երկու տարվա համար Խորհրդի և կից հանձնաժողովների (որոնցում լիազորությունների դադարման ժամանակ ներգրավված էր Խորհրդի անդամը) նիստերին մասնակցելու համար վճարվելիք մասնակցության վճարների և լրավճարի չափով:

### **40. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ և ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ**

40.1. Բանկը կարող է նվազեցնել կամ վերականգնել արդեն վճարված վարձատրությունը («malus» կամ «clawback») այն դեպքերում, երբ Խորհրդի անդամը պատշաճ ջանասիրությամբ չի կատարել իր պարտականությունները: Նվազեցումը կամ վերականգնումը պետք է իրականացվի Խորհրդի հիմնավորված որոշմամբ՝ հաշվի առնելով Խորհրդին կից համապատասխան հանձնաժողովի առաջարկությունը:

40.2. Խորհուրդը, տարեկան առնվազն մեկ անգամ կամ իրավական ու կառավարման պահանջների էական փոփոխությունների դեպքում, պետք է վերանայի իր վարձատրության սկզբունքներն ու սխեման:

### **41. ԲԱՑԱԿԱՅՏՈՒՄԸ և ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ**

41.1. Խորհրդի անդամների վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հրապարակվի Բանկի կորպորատիվ կառավարման հաշվետվությունում՝ գործող կարգավորումներին համապատասխան:

## **ԲԱԺԻՆ 10. ՇԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **42. ՇԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ և ՇՐՋԱՆԱԿԸ**

42.1. Կանոնակարգի շրջանակում Բանկի շահակիցները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

1. Բաժնետերեր՝ անկախ մասնակցության չափից,
2. Բանկի հաճախորդներ,
3. Աշխատակիցներ և Բանկի ղեկավարներ,
4. կարգավորող և վերահսկող մարմիններ, մասնավորապես՝ ՀՀ Կենտրոնական բանկը,
5. ներդրողներ և ռազմավարական գործընկերներ,
6. արտաքին աուդիտորներ և վարկանիշային գործակալություններ,

7. հանրություն և համայնք՝ Բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գործունեության շրջանակում:

### **43. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

43.1. Խորհուրդը պետք է ապահովի, որ Բանկը պահպանի շահակիցների հետ թափանցիկ, արդար և կառուցողական հարաբերություններ՝ համահունչ իր կորպորատիվ արժեքներին և երկարաժամկետ նպատակներին: Ներգրավման գործընթացը պետք է հիմնվի բարեխղճության, փոխադարձ հարգանքի, պատասխանատվության և թափանցիկության սկզբունքների վրա:

43.2. Խորհուրդը պետք է վերահսկի, որ շահակիցների ակնկալիքների բացահայտման և դրանց ժամանակին և արդյունավետ արձագանքման համար գործեն համապատասխան մեխանիզմներ: Շահակիցների հետ փոխհարաբերությունները պետք է համապատասխանեն գործող օրենսդրությանը, Բանկի ներքին քաղաքականություններին և կորպորատիվ կառավարման ճանաչված չափանիշներին:

### **44. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՏ**

44.1. Խորհուրդը պետք է խթանի բաժնետերերի հետ արդյունավետ հաղորդակցությունը և ապահովի, որ բոլոր բաժնետերերը հավասար և արդար վերաբերմունքի արժանանան, այդ թվում՝ հասանելիություն ունենան Բանկի գործունեության, ֆինանսական արդյունքների և ռազմավարական զարգացումների վերաբերյալ ճշգրիտ և ամբողջական տեղեկատվության:

44.2. Խորհուրդը պետք է նպաստի բաժնետերերի արդյունավետ մասնակցությանը հիմնական կորպորատիվ որոշումներին, ինչպես պահանջվում է կիրառելի օրենսդրությամբ, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով.

1. Բանկի կանոնադրության ընդունումը և դրա փոփոխությունները,
2. Բանկի վերակազմակերպումը,
3. խոշոր գործարքները՝ ինչպես սահմանված է կիրառելի օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ,
4. Խորհրդի անդամների ընտրությունը,
5. տարեկան ֆինանսական հաշվետվությունները և այլ կարևոր հարցեր:

44.3. Խորհուրդը պետք է հաստատի և վերահսկի Ընդհանուր ժողովներ վարելու և անցկացնելու ընթացակարգերը՝ ապահովելով օրակարգի և կից նյութերի ժամանակին հրապարակումը,

44.4. Խորհուրդը պետք է խթանի փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի պաշտպանության մեխանիզմները՝ կիրառելի օրենքներին և կառավարման չափանիշներին համապատասխան:

44.5. Խորհրդի անդամները, որոնք Բանկի բաժնետեր չեն, իրավունք ունեն մասնակցել Ընդհանուր ժողովին՝ խորհրդատվական ձայնի իրավունքով:

## **ԲԱԺԻՆ 11. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

### **45. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

45.1. Կանոնակարգի սույն խմբագրությունն ուժի մեջ է մտնում 05.06.2025թ.-ին բացառությամբ Բաժին 9-ի (Վարձատրություն) դրույթների, որոնք ուժի մեջ կմտնեն Ընդհանուր ժողովի 29/05/2025թ.-ի N 26-11 որոշմամբ հաստատված Բանկի կանոնադրության նոր խմբագրության ուժի մեջ մտնելուց հետո:

### **46. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ**

46.1. Բաժին 9-ի դրույթների ուժի մեջ մտնելուց հետո, առաջին տարեկան Ընդհանուր ժողովը պետք է հաստատի Խորհրդի անդամների վարձատրության սխեման և դրա կառուցվածքը՝ առաջնորդվելով նշված Բաժնի դրույթներով: